

7 Ապայ նա անտի յուզի անկանէր
Գընալ ի Հռոմ որպէս եւ ուխտն էր,
Ուր հասեալ ողջամբ յոյժ պատուեալ լինէր 1745
Յիւրաքանչիւրոյ՝ Ազգիս որ անդ էր:

8 Յայնժամ կայր յաթոռ Սրբոյն Պետրոսի,
Բենեդիկտոս Պապ՝ որ վերաձայնի
Չորեքտասաներորդ եւ Լամպէրգինի,
Այր քաջ է՝ իմաստուն եւ յոյժ անուանի:

9 Ձոր ի յայդորել Սարգիս վաղվաղէր,
Ճանաչեալ ըզնա ծայրագոյն եւ ծեր
Քահանայապետ է՝ ընդհանրական տէր
Ողջ եկեղեցւոյ որ է սուրբ մայր մեր:

10 Ընդ որում խօսեալ թարգմանչի լեզուաւ
Ջիւր հանձար նրմա յայտներ ոչ սակաւ,
Յորմէ ընկալնոյր տակաւ առ տակաւ
Պատուասիրութիւն, շուք շնորհիւ մեծաւ:

11 Յետ ամնոց անդէն կարգել գէպ լինէր 1746
Ի դասս սրբոց ըզհինգ խաչասէր,
Որք նընջեալ էին սրբաբար ի տէր,
Որոց հրաշք է՝ անուն յաշխարհ սփռեալ էր:

12 Առ այս արժան էր եպիսկոպոսաց,
Ըստ եկեղեցւոյ ժիր դատաւորաց,
Յետ զընման վարուց նոյն երանելաց
Տալ յատուկ գրրով ըզվիճակ իւրեանց:

Յոյր սակս իբր ժողով լինէր գումարեալ
13 Յեպիսկոպոսաց անդանօր եղեալ
Յոր հրաւիրանաւ Սարգիս իսկ բազմեալ
Ղիճակաւ իւրով այնմ լինէր հաճեալ: